Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23

ք. Երևան **14.03.2023թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 14.1-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.3/4706-2023, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.7/3421-2023, ՀՀ էկոնոմիկայի 03/3781-2023 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության, Քաղաքաշինության 06/11.1/2586-2023 և Կադաստրի ԱԳ/2873-2023 կոմիտեների գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ֆանտան բնակավայրի հողերի** նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում Չարենցավան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից **0.018 հա** արոտավայր (կադաստրային ծածկագիր՝ 07-067-0100-0008) փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ կապի հողեր գործառնական նշանակության՝ բջջային կապի կայան տեղակայելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Հ. Մկրտչյան